ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Հուլիսի 21-ին Արարատյան Հայրապետական թեմում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվեց Երևանի Էրեբունի համայնքի Ս. Մեսրոպ եկեղեցու հիմնարկեքը: Եկեղեցին կառուցվում է ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Սարգիս և Բոբի Հակոբյանների հովանավորությամբ: Նրանց բարերարությամբ Հայաստանում կառուցվել է ևս մեկ՝ Գյումրիի Անի թաղամասի Ս. Հակոբ եկեղեցին:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի և արարողությանը մասնակից Սրբազան Հայրերի՝ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպս. Կճոյանի, Տ. Փառեն եպս. Ավետիքյանի եւ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանի, օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը: Կառուցվող եկեղեցու կնքահայրերն էին՝ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը, ԿԲ նախագահ, թեմական խորհրդի ատենապետ Տիգրան Սարգսյանը, ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, Էրեբունի և Աջափնյակ համայնքների թաղապետեր Միհեր Սեդրակյանը և Արծրուն Խաչատրյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Վլադիմիր Բարխուդարյանն ու Ռաֆայել Պապայանը, ինչպես նաև տիարք Ֆադեյ Սարգսյանը, Ռազմիկ Մարկոսյանը, Վրեժ Մարկոսյանը, Վիլեն Հակոբյանը, Գրիգոր Մելքումյանը, Լ. Զանոյանը, Գ. Ճանճապանյանը և Ա. Ղուլյանը:

«*Մեր հոգին բերկրանք և ցնծություն է ապրում: Էրեբունի համայնքը կունենա իր եկեղեցին, ուր հավատավոր Մեր զավակները կգան իրենց ուխտը վերանորոգելու, Աստծո հետ հաղորդակցվելու: Պիտի գան հայց առ Աստված բարձրացնելու մեր հայրենի երկրի շինության և նրա հարատև զորացման համար: ...Մենք հավատում ենք, որ հիմնարկեքի սրբազան այս արարողությամբ հաստատուն պիտի լինեն հիմերը այս եկեղեցու, և այն օրավուր առավել պիտի ամրանա ու զորանա Մեր զավակների հոգեբուխ աղոթքներով*»,- ասաց Վեհափառ Հայրապետը: Նա իր գնահատանքը հայտնեց եկեղեցու բարերարներին իրենց ազնիվ հանձնառության համար՝ մաղթելով նրանց քաջառողջություն և արևշատություն: Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց Տ. Նավասարդ արքեպս. Կճոյանին՝ նվիրյալ ծառայության համար ի պայծառություն Սուրբ Եկեղեցու, ինչպես նաև հայրենի իշխանություններին, որոնք մշտապես աջակցություն են ցուցաբերում Հայ Եկեղեցուն եկեղեցաշինության գործում: Վեհափառ Հայրապետի գնահատանքին արժանացան նաև եկեղեցու ճարտարապետներ Արտակ Ղուլյանը և Գրիգոր Նալբանդյանը, շինարարությունը իրականացնող «Բազմաշին» կազմակերպությունը:

Եկեղեցու կառուցումը նախատեսվում է ավարտել երկուսուկես տարում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ